ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ N 694-Ա

«13» նոյեմբերի 2023 թվական գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի, 76-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի, 78-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 15-ի թիվ 143-Ա և 2023 թվականի հոկտեմբերի 13-ի N 160-Ա որոշումը՝

Որոշում եմ՝

1. 2023 թվականի դեկտեմբերի 15-ին, ժամը 11:00-ին, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանում անցկացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասերի վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրման մրցույթ՝ համաձայն հավելված 1-ի:

2. Մրցույթի անցկացումից մեկ ամիս առաջ «Առավոտ» օրաթերթում, Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների http://www.azdarar.am, Շիրակի մարզպետարանի և Ախուրյանի համայնքապետարանի պաշտոնական կայք էջերում հրապարակել հայտարարություն՝ մրցույթի անցկացման օրվա, տեղի, ժամի, հողամասերի գտնվելու վայրի, չափերի, կադաստրային ծածկագրերի, մեկնարկային գների, նախավճարների չափի, քայլերի չափի, օգտագործման նպատակի, ճանապարհների առկայության, հողերի որակական հատկանիշների և հողամասերի նկատմամբ սահմանափակումների մասին՝ համաձայն հավելված 2-ի:

3.Մրցույթը կազմակերպել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2023 թվականի օգոստոսի 29-ի թիվ 137-Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովի միջոցով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

13 նոյեմբերի 2023 թվական
գյուղ Ախուրյան

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Ախուրյան համայնքի ղեկավարի 2023 թվականի
Նոյեմբերի 13-ի թիվ 694-Ա որոշման

N	Հողամասի գտնվելու վայրը	Հողամասի կադաստրային ծածկագիրը	Հողամասի գործառնական նշանակությունը (հողատեսքը)	Հողամասի մակերեսը (հեկտար)	Հողի որակական հատկանիշը		Օգտագործման տրամադրման նպատակը	Հողամասի նկատմամբ սահմանափակումների (ներառյալ՝ սերվիտուտների) առկայությունը	Վարձավճարի մեկնարկային չափը (դրամ)
					Հողի կարգ	Ջրովի/ անջրդի			
1	ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Կառնուտ	08-053-0166-0016	վարելահող	1,5	V	ջրովի	Գյուղատն-տեսական գործունեության ծավալում	առկա	30000
2	ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Ազատան	08-004-0685-0032	արոտավայր	0,87658	III	անջրդի	Գյուղատնտեսական գործունեության ծավալում	առկա	20000
3	ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Ախուրիկ	08-006-0202-0010	վարելահող	1	IV	անջրդի	Գյուղատնտեսական գործունեության ծավալում	առկա	15000
4	ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Կապս	08-052-0200-0011	արոտավայր	0,38982	II	անջրդի	Գյուղատնտեսական գործունեության ծավալում	առկա	8000
5	ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Լեռնուտ	08-047-0105-0135	վարելահող	1,33852	IV	անջրդի	Գյուղատնտեսական գործունեության ծավալում	առկա	10000

6	ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Վահրամաբերտ	08-0108-0089-0003	արոտավայր	0,10276	V	անջրդի	Գյուղատնտեսական գործունեության ծավալում	առկա	10000

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Ախուրյան համայնքի ղեկավարի 2023 թվականի
Նոյեմբերի 13-ի թիվ 694-Ա որոշման

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանը հայտարարում է համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 6 կտոր հողերի վարձակալության մրցույթ:
Մրցույթը կկայանա 2023 թվականի դեկտեմբերի 15-ին, ժամը 11:00-ին, Ախուրյանի համայնքապետարանի վարչական շենքում (Հայաստանի Հանչապետության Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գյուղ Ախուրյան, Գյումրու խճուղի 42):
Հայտերի ընդունման վերջնաժամկետն է 2023 թվականի դեկտեմբերի 11-ը ներառյալ:
Հայտերն ընդունվում են ամեն օր, բացի շաբաթ և կիրակի օրերից, ժամը 10:00-ից 13:00-ն, 14:00-ից 17:00-ն ներառյալ (Հայտերն ընդունվում են Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի շենքում, 2-րդ հարկ, 18 սենյակ):
Մրցույթում հաղթած է համարվում հանձնաժողովի եզրակացությամբ լավագույն պայմաններ առաջարկած և կշռային գործակիցներով բարձր միավորներ հավաքած մասնակիցը:
Վարձակալության տրամադրվող հողերի նկարագիրը՝
Լոտերի թիվը՝ 6,
Հողերի նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական,
Վարձակալության տրամադրման ժամկետը՝ 10 տարի,
Մրցույթի ձևը՝ բաց,
Մրցույթի մասնակցության վճարի չափը՝ 2000 ՀՀ դրամ,
Նախավճարի չափը վարձավճարի մեկնարկային գնի նկատմամբ՝ 5%,
Քայլի չափը՝ վարձավճարի մեկնարկային գնի նկատմամբ՝ 5%

N	Հողամասի գտնվելու վայրը	Հողամասի կադաստրային ծածկագիրը	Հողամասի գործառնական նշանակությունը (հողատեսքը)	Հողամասի մակերեսը (հեկտար)	Հողի որակական հատկանիշը		Օգտագործման տրամադրման նպատակը	Հողամասի նկատմամբ սահմանափակումների (ներառյալ՝ սերվիտուտների) առկայությունը	Վարձավճարի մեկնարկային չափը (դրամ)
					Հողի կարգ	Ջրովի/ անջրդի			
1	ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Կառնուտ	08-053-0166-0016	վարելահող	1,5	V	ջրովի	Գյուղատն-տեսական գործունեության ծավալում	առկա	30000
2	ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Ազատան	08-004-0685-0032	արոտավայր	0,87658	III	անջրդի	Գյուղատնտեսական գործունեության ծավալում	առկա	20000
3	ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Ախուրիկ	08-006-0202-0010	վարելահող	1	IV	անջրդի	Գյուղատնտեսական գործունեության ծավալում	առկա	15000

4	ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Կապս	08-052-0200-0011	արոտավայր	0,38982	II	անջրդի	Գյուղատնտեսական գործունեության ծավալում	առկա	8000
5	ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Լեռնուտ	08-047-0105-0135	վարելահող	1,33852	IV	անջրդի	Գյուղատնտեսական գործունեության ծավալում	առկա	10000
6	ՀՀ Շիրակի մարզ Ախուրյան համայնք գյուղ Վահրամաբերտ	08-0108-0089-0003	արոտավայր	0,10276	V	անջրդի	Գյուղատնտեսական գործունեության ծավալում	առկա	10000

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 նոյեմբերի 2023 թվականի N 695-Ա

Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻ ՀԱՅԿԱՆՈՒՇ ՍԱՐԻԲԵԿԻ ԵՆԳՈՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿՍՌՈՒՑՎԱԾ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎԱԾ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, 2-րդ և 3-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 39-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2022 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 190-Ա որոշումը և հաշվի առնելով, որ ինքնակամ շինությունն իրականացրած քաղաքացի Հայկանուշ Սարիբեկի Ենգոյանը իր դիմումով ընդունել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օրինական ճանաչված և համայնքի սեփականությունը համարված 52,97 քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով հասարակական նշանակության ծածկը և կից կառուցված հարթակը, ինչպես նաև դրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականությունը հանդիսացող, բնակավայրերի հողերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 08-004-0029-0024 կադաստրային ծածկագրով 0.01052 հեկտար մակերեսով հողամասը (անշարժ գույքի հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գյուղ Ազատան, 1-ին փողոց, 28/1), գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքով ձեռք բերելու առաջարկությունը, որոշում եմ՝

1. Օրինական ճանաչված և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականությունը համարված 52,97 քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով ծածկը և կից կառուցված հարթակը, ինչպես նաև դրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականությունը հանդիսացող, բնակավայրերի հողերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 08-004-0029-0024 կադաստրային ծածկագրով 0.01052 հեկտար մակերեսով հողամասը, ուղղակի վաճառքով գնման նախապատվության իրավունքով 192491 (մեկ հարյուր իննսուներկու հազար չորս հարյուր իննսունմեկ) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով, որից՝ 64041 Հայաստանի Հանրապետության դրամը շինության արժեքն է, իսկ 128450 Հայաստանի Հանրապետության դրամը՝ հողամասի, օտարել կառուցապատողին՝ քաղաքացի Հայկանուշ Սարիբեկի Ենգոյանին:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված վաճառքի ընդհանուր գնին հավելել տվյալ գույքային միավորի նկատմամբ մինչև օտարումը համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարները՝ վճարման անդորրագրերի հիման վրա:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Հայկանուշ Սարիբեկի Ենգոյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
4. Սույն որոշումից բխող իրավունքները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա են պետական գրանցման՝ քաղաքացու միջոցներով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Զ.ՄԱՆՈՒԿՅԱՆ

«14» նոյեմբերի 2023 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 նոյեմբերի 2023 թվականի N 696-Ա

Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՎԻՏ ԳՅՈՒՂԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ 15 ՀԱՍՑԵԻ 08-068-0019-0026 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Արմեն Մամիկոնի Սերոբյանը (ծնված 11/01/1991 թվական) դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարին՝ սեփականության իրավունքով (սեփականության իրավունքի վկայական 10112023-08-0059) իրեն պատկանող 08-068-0019-0026 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,163 հեկտար մակերեսով հողամասի վրա ինքնակամ կառուցված բնակելի նշանակության շինություններն օրինական ճանաչելու խնդրանքով:

Սեփականության իրավունքով Արմեն Մամիկոնի Սերոբյանին պատկանող, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Հովիտ գյուղի, 1-ին փողոց 15 հասցեի հողամասի վրա գտնվող ինքնակամ կառուցված 588,96 քառակուսի մետր ներքին մակերեսով շինությունները կառուցվել են 1951 –ից 1998 թվականներին (մինչը 2001 թվականի մայիսի 15ը), 17,53 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տունը կառուցվել է 2019 թվականին իսկ 12,37 քառակուսի մետր ընդհանուր ներքին մակերեսով շինությունները որոնք կառուցվել են 2021 թվականին: Ինքնակամ կառույցները կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրա պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 6-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունվարի 5-ի թիվ 14-Ն որոշման 2-րդ կետի, «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի թիվ 912-Ն որոշման 1-ին և 4-րդ կետերի դրույթներով, համաձայն նույն որոշման կարգի 8-րդ, 10-րդ, 11-րդ կետերի, 13-րդ կետի ա) ենթակետի և 18-րդ կետի դ) ենթակետի, 22.1 կետի պահանջների, ինչպես նաև հաշվի առնելով «Անշարժ

գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածով սահմանված շինության տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցների (Գգ) սահմանված չափը՝ որը Հովիտ գյուղի (Շիրակի մարզ, 18-րդ գոտի) համար 0,0631 է, որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Հովիտ գյուղի 1--ին փողոց 15 հասցեում կառուցված 588,96 քառակուսի մետր ընդհանուր ներքին մակերեսով շինությունները ճանաչել օրինական առանց վճարների գանձման:
2. Նույն հողամասի վրա 2019 թվականին կառուցված 17,53 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տունը ճանաչել օրինական սահմանված վճարների դիմաց:
3. Սույն որոշման 2-րդ կետով օրինական ճանաչված բնակելի նշանակության շինությունների յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի օրինականացման համար սահմանել 10000 Հայաստանի Հանրապետության դրամ, և կիրառել շինության տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության 0,0631 գործակիցը: Ընդամենը շինության օրինականացման համար հաշվարկված վճարը կազմում է 11062 (տասնմեկ հազար վաթսուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ:
4. Նույն հողամասի վրա առկա 12,37 քառակուսի մետր ընդհանուր ներքին մակերեսով շինությունները թողնել ինքնակամ:
5. Սույն որոշման ուժի մեջ մտնելու օրվանից հաշված, 60 օրյա ժամկետում, օրինականացման համար սույն որոշման 3-րդ կետով սահմանված գումարը չվճարելու դեպքում՝ որոշումն համարվում է ուժը կորցրած:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անշարժ գույքի սեփականատիրոջը պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
7. Գույքային իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԶԱՎԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

«14» նոյեմբերի 2023 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ N 697-Ա

<<14>> նոյեմբերի 2023 թվական գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԵԹԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՌՈՄԱՆ ՌՈՍՏՈՄԻ ՄԱԿԱՐՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 130-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով և հիմք ընդունելով Ռոման Ռոստոմի Մակարյանի դիմումը **որոշում եմ՝**

1.Լուծել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Քեթի բնակավայրի վարչական ղեկավար՝ Ռոման Ռոստոմի Մակարյանի հետ 2023 թվականի օգոստոսի 10-ին կնքած N 08/08/23-14 աշխատանքային պայմանագիրը՝ 2023 թվականի նոյեմբերի 16-ին:

2.Ռոման Ռոստոմի Մակարյանի վերջին աշխատանքային օր համարել 2023 թվականի նոյեմբերի 15-ը:

3.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կատարել վերջնահաշվարկ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

14 նոյեմբերի 2023 թվական
Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ N 698-Ա

<<14>> նոյեմբերի 2023 թվական գյուղ Ախուրյան

ՎՈԼՈԴՅԱ ՍԱՄՎԵԼԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԵԹԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի, 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ և 24-րդ կետերի, 59-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, <<Հանրային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 15-րդ մասի, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով և հիմք ընդունելով Վոլոդյա Սամվելի Սարգսյանի դիմումը **որոշում եմ՝**

1.Վոլոդյա Սամվելի Սարգսյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Քեթի բնակավայրի վարչական ղեկավարի պաշտոնում:

2.Վոլոդյա Սամվելի Սարգսյանի հետ կնքել աշխատանքային պայմանագիր 2023 թվականի նոյեմբերի 16-ին և աշխատանքի սկիզբ համարել 2023 թվականի նոյեմբերի 16-ը:

3.Աշխատավարձը՝ ըստ հաստատված հաստիքացուցակի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

<<14>> նոյեմբերի 2023 թվական
Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ N 699-Ա

<<14>> նոյեմբերի 2023 թվական գյուղ Ախուրյան

ԱՀԱՐՈՆ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՈՍԿԱՆՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԻ (ԾԱԾԿԱԳԻՐ՝ 2) ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հանրային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ և 9-րդ մասերի, 9-րդ հոդվածի 15-րդ մասի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով և հիմք ընդունելով Ահարոն Սերյոժայի Ոսկանյանի դիմումը **որոշում եմ՝**

1.Ահարոն Սերյոժայի Ոսկանյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի խորհրդականի (ծածկագիր՝ 2) պաշտոնում:

2.Ահարոն Սերյոժայի Ոսկանյանի հետ կնքել աշխատանքային պայմանագիր 2023 թվականի նոյեմբերի 15-ին և աշխատանքի սկիզբ համարել 2023 թվականի նոյեմբերի 15-ը:

3.Աշխատավարձը՝ ըստ հաստիքացուցակի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

<<14>> նոյեմբերի 2023 թվական
Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 նոյեմբերի 2023 թվականի N 700-Ա

Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԽՈՒՐՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 08-007-0014-0001 ԵՎ 08-007-0014-0002 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0,029004 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՈՒ ԴՐԱ ՎՐԱ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՆՆԱ ԱՐՏԱՇԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Աննա Արտաշի Աբրահամյանը դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրյան բնակավայրի Հոլանդական թաղամասի 3-րդ փողոց, 5 հասցեում գտնվող 08-007-0014-0001 և 08-007-0014-0002 կադաստրային ծածկագրերով հողամասերի սահմաններում գտնվող 0,029004 հեկտար մակերեսով հողամասի և դրա վրա կառուցված բնակելի տան նկատմամբ իր սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Հաշվի առնելով, որ 0,029004 հեկտար մակերեսով հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, բնակելի տունը կառուցված չէ ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և դրա պահպանումը չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին և 3-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի, 1-ին մասի, 24-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 1328-Ն որոշման 1-ին կետի դրույթներով, որոշում եմ՝

1. Ճանաչել քաղաքացի Աննա Արտաշի Աբրահամյանի (ծնված 24/06/1972 թվական) սեփականության իրավունքը՝ Հայաստանի Հանրապետության

Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրյան բնակավայրի Հոլանդական թաղամաս, 3-րդ փողոց, 5 հասցեում գտնվող 08-007-0014-0001 և 08-007-0014-0002 կադաստրային ծածկագրերով հողամասերի սահմաններում գտնվող 0,029004 հեկտար մակերեսով հողամասի և այդ հողամասի վրա մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցված բնակելի տան նկատմամբ, այն համարել օրինական՝ առանց օրինականացման վճարների գանձման:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Աննա Արտաշի Աբրահամյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

3. Գույքային իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

«14» նոյեմբերի 2023 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ N 701 – Ա

14 նոյեմբերի 2023 թվական

գյուղ Ախուրյան

ՍՈՒՐԵՆ ԽԱՉԻԿԻ ՍԱՄՎԵԼՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ՄԱՐՄԱՇԵՆԻ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 24-րդ կետերի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին, 1.5-րդ և 1.7-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին մասի, 94-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Սուրեն Խաչիկի Սամվելյանի դիմումը՝

որոշում եմ՝

1.Սուրեն Խաչիկի Սամվելյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Մարմաշենի արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար:

2.Սուրեն Խաչիկի Սամվելյանի հետ կնքել որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր 2023 թվականի նոյեմբերի 15-ից՝ մինչև թափուր պաշտոնը մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը, բայց ոչ ավել՝ քան վեց ամիս ժամկետով:

3.Աշխատանքի սկիզբ համարել 2023 թվականի նոյեմբերի 15-ը:

4.Աշխատավարձը՝ ըստ հաստատված հաստիքացուցակի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

14 նոյեմբերի 2023 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 նոյեմբերի 2023 թվականի N 702 -Ա

Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՌԱՓԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 08-016-0052-0013 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ՆՈՐ ԱՌԱՋԱՑԱԾ 0,079966 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՏՎԱԾԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 24-րդ, 28-րդ, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով և համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի, դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետի պահանջների որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Առափի բնակավայրի տարածքում գտնվող 08-016-0052-0013 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, այլ հող գործառնական նշանակության 0,079966 հեկտար մակերեսով հատվածի գործառնական նշանակությունը փոխել բնակելի կառուցապատման:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված 0,079966 հեկտար մակերեսով հողամասը հասցեավորել՝ «Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գյուղ Առափի, 4-րդ փողոց, 90/1 հողամաս»:
3. Սույն որոշմամբ կատարված փոփոխությունները գրանցելու նպատակով, ներկայացնել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Զ.ՄԱՆՈՒԿՅԱՆ**

«15» նոյեմբերի 2023 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 նոյեմբերի 2023 թվականի N 703-Ա

Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՎԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 8-ՐԴ ՓՈՂՈՑ 26 ՀԱՍՑԵԻ 08-020-0040-0002 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՈՒՄԻՑ ԱՌԱՋԱՑՈՂ ՆՈՐ ՕԲՅԵԿՏՆԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 24-րդ կետերի, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով և համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի, դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետի և 33-րդ կետի պահանջների, որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Արևիկ բնակավայրի 8-րդ փողոց, 26 հասցեում գտնվող, 08-020-0040-0002 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի բաժանումից առաջացող հատվածները հասցեավորել հետևյալ կերպ՝
   1) բաժանման սխեմայի 0,122642 հեկտար մակերեսով թիվ 1 հատվածի հասցեն թողնել նույնը «Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գյուղ Արևիկ, 8-րդ փողոց, 26 հողամաս»,
   2) բաժանման սխեմայի 0,031932 հեկտար մակերեսով թիվ 2 հատվածին տրամադրել հետևյալ հասցեն՝ «Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գյուղ Արևիկ, 1-ին փողոց, 22/1 հողամաս»
2. Գույքի բաժանման սխեման կցվում է սույն որոշմանը՝ համաձայն հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Զ.ՄԱՆՈՒԿՅԱՆ**

«15» նոյեմբերի 2023 թվական
գյուղ Ախուրյան

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի 2023
թվականի նոյեմբերի 15-ի թիվ 703 որոշման

	ՀՈՂԱՄԱՍԻ ԲԱԺԱՆՄԱՆ / ՄԻԱՎՈՐՄԱՆ /ՍԽԵՄԱ	Գլ 2
Սեփականատեր	Շիրակի մարզ Ախուրյան համայնք գ.Արևիկ 8-րդ փողոց թիվ 26	
Ախուրյան համայնք	Մարզ, համայնք հասցե	



Մակերեսը (հա)	
Ծածկագիր	
Նպատակային նշանակություն	
Գործառնական նշանակություն	

Լրացուցիչ նշումներ

Մասշտաբ 1:1000

Որակավորում ունեցող անձ	Արսեն Առաքելյան
Որակավորման վկայականի համար	007
ստորագրություն	
Իրավաբանական անձի անվանումը	«Արսեն Առաքելյան» ԱՁ
ՀՎՀՀ	57359503
ստորագրություն	

ամիս ամսաթիվ	չափագրություն	27.10.2023թ.
	հատակագծի կազմման	01.11.2023թ.

Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 նոյեմբերի 2023 թվականի N 704-Ա

Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՄԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 08-078-0024-0031 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆՐՈՒՄ ՆՈՐ ԱՌԱՋԱՑԱԾ 0,01197 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՏՎԱԾԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 24-րդ, 28-րդ, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով և համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի, դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետի պահանջների որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Մարմաշեն բնակավայրի տարածքում գտնվող 08-078-0024-0031 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, այլ հող գործառնական նշանակության 0,01197 հեկտար մակերեսով հատվածի գործառնական նշանակությունը փոխել բնակելի կառուցապատման:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված 0,01197 հեկտար մակերեսով հողամասը հասցեավորել՝ «Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գյուղ Մարմաշեն, 42-րդ փողոց, 3/1 հողամաս»:
3. Սույն որոշմամբ կատարված փոփոխությունները գրանցելու նպատակով, ներկայացնել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Զ.ՄԱՆՈՒԿՅԱՆ**

«15» նոյեմբերի 2023 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ N 705-Ա

Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՎԱՀՐԱՄԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 25-ԻՆ ԿՆՔՎԱԾ ԵՎ ՍԵՂԱՆԱՄԱՏՅԱՆԻ ԹԻՎ 27888 ՀԱՄԱՐՈՎ ԳՐԱՆՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 102-րդ հոդվածի 4-րդ մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի1-ին կետի 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից իրավունքների պետական գրանցման թիվ 22122021-08-0034 վկայականում հողամասի կադաստրային ծածկագրի ուղղման հանգամանքը՝ **որոշում եմ.**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Վահրամաբերդ համայնքի ղեկավարի և «Ակադեմիկոս Ա.Լ.Մնջոյանի Գյումրիի ՀԷԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 2016 թվականի հոկտեմբերի 25-ին կնքված հողամասի վարձակալության իրավունքով տրամադրելու մասին պայմանագրի (գրանցված սեղանամատյանում թիվ 27888 համարով) 1.3 կետում հողամասի կադաստրային ծածկագրի «08-108-118-005» թվերը փոխարինել «08-108-0083-0090» թվերով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

«15» նոյեմբերի 2023 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ N 706-Ա

«15» նոյեմբերի 2023 թվական գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ՋԱՋՈՒՌԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՍՈՖՅԱ ԳԱՐԵԳԻՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 24-րդ կետերի դրույթներով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Ջաջուռի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Սոֆյա Գարեգինի Հովհաննիսյանի հետ 2022 թվականի դեկտեմբերի 19-ին կնքած աշխատանքային պայմանագրի 6.1 կետի «գ» ենթակետը և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Ջաջուռի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Սոֆյա Գարեգինի Հովհաննիսյանի դիմումը **որոշում եմ՝**

1.Լուծել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Ջաջուռի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Սոֆյա Գարեգինի Հովհաննիսյանի հետ 2022 թվականի դեկտեմբերի 19-ին կնքած աշխատանքային պայմանագիրը՝ 2023 թվականի նոյեմբերի 16-ից:

2.Աշխատանքային վերջին օր համարել 2023 թվականի նոյեմբերի 15-ը:

3.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Ջաջուռի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Ջաջուռի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության մեթոդիստ /ուսումնական գծով տեղակալ/ Վարդանուշ Գագիկի Սահակյանին:

4.Կատարել վերջնահաշվարկ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

«15» նոյեմբերի 2023 թվական
Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ N 707- Ա

16 նոյեմբերի 2023 թվական գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 2_Ի ԹԻՎ 371-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով՝

որոշում եմ՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի 2023 թվականի մայիսի 2-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վաճառքն աճուրդով կազմակերպելու համար մշտական գործող հանձնաժողով ստեղծելու մասին» թիվ 371-Ա որոշման վերնագրում և տեքստում «վաճառքն աճուրդով կազմակերպելու» բառերից հետո լրացնել «կամ վարձակալությամբ տրամադրելու » բառերով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

16 նոյեմբերի 2023 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 նոյեմբերի 2023 թվականի N 708-Ա

Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆ ԵՐԱԶԳԱՎԵՐՍ ԳՅՈՒՂԻ 2-ՐԴ ՓՈՂՈՑ 40 ՀԱՍՑԵԻ 08-037-0017-0002 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Արտակ Մխիթարի Հայրապետյանը (ծնված 09/11/1973 թվական) դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարին՝ ժառանգության իրավունքով (հիմք ժառանգության վկայագիր 787-20231107-84-749990) իրեն պատկանող Երազգավորս գյուղի 2-րդ փողոց 40 հասցեի 08-037-0017-0002 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,119 հեկտար մակերեսով տնամերձ հողամասի վրա առկա, ինքնակամ համարվող բնակելի նշանակության շենք շինություններն օրինական ճանաչելու խնդրանքով:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարկի Երազգավորս համայնքում հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 1991 թվականի օգոստոսի 24-ի թիվ 6 որոշմամբ Շուշանիկ Բաբկենի Հայրապետյանի և Արտակ Մխիթարի Հայրապետյանի անվամբ սեփականաշնորհված և ժառանգության իրավունքով Արտակ Մխիթարի Հայրապետյանին փոխանցված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Երազգավորս գյուղի, 2-րդ փողոց, 40 հասցեի հողամասի վրա գտնվող ինքնակամ կառույց համարվող 184,46 քառակուսի մետր ընդհանուր ներքին մակերեսով բնակելի տունը, շվաքարանը, անասնաշենքը և ծածկը կառուցվել են 1983 թվականից մինչև 1985 թվականը (2001 թվականի մայիսի 15-ից առաջ), իսկ ինքնակամ կառուցված 3,29 քառակուսի մետր արտաքին մակերեսով նկուղը՝ 2014 թվականին: Ինքնակամ կառույցները կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք: Ինքնակամ կառույցները հաշվառված են Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեում թիվ 2023VS39EP ծածկագրով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 6-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունվարի 5-ի թիվ 14-Ն որոշման 2-րդ կետի, «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի թիվ 912-Ն որոշման 1-ին և 4-րդ կետերի դրույթներով, համաձայն նույն որոշման կարգի 8-րդ, 10-րդ, 11-րդ կետերի, 13-րդ կետի բ) ենթակետի և 22.1 կետի պահանջների, ինչպես նաև հաշվի առնելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածով սահմանված շինության տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցների (Գգ) սահմանված չափը՝ որը Երազգավորս գյուղի (Շիրակի մարզ, 17-րդ գոտի) համար 0,0743 է, որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Երազգավորս գյուղի 2-րդ փողոց, 40 հասցեի հողամասի վրա 1983 թվականից մինչև 1985 թվականը կառուցված 184,46 քառակուսի մետր ընդհանուր ներքին մակերեսով բնակելի տունը, շվաքարանը, անասնաշենքը և ծածկը ճանաչել օրինական առանց վճարների գանձման:
2. Նույն հողամասի վրա 2014 թվականին ինքնակամ կառուցված 3,29 քառակուսի մետր արտաքին մակերեսով նկուղը ճանաչել օրինական սահմանված վճարների դիմաց:
3. Սույն որոշման 2-րդ կետով օրինական ճանաչված օժանդակ շինության յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի օրինականացման համար սահմանել 6000 Հայաստանի Հանրապետության դրամ և կիրառել շինության տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության 0,0743 գործակիցը: Ընդամենը շինության օրինականացման համար հաշվարկված վճարը կազմում է 1467 (մեկ հազար չորս հարյուր վաթսունյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ:
4. Սույն որոշման ուժի մեջ մտնելու օրվանից հաշված, 60 օրյա ժամկետում, օրինականացման համար սույն որոշման 3-րդ կետով սահմանված գումարը չվճարելու դեպքում՝ որոշումն համարվում է ուժը կորցրած:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անշարժ գույքի սեփականատիրոջը պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
6. Գույքային իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԶԱՎԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

«16» նոյեմբերի 2023 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 նոյեմբերի 2023 թվականի N 709-Ա

Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 6-Ի ԹԻՎ 687-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի և 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի դրույթներով, որոշում եմ՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի 2023 թվականի նոյեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Մայիսյան բնակավայրի 1-ին փողոց 4-րդ նրբանցք թիվ 7 հասցեում գտնվող արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության համայնքապատկան հողամասի վրա գտնվող արտադրական նշանակության շինությունները համայնքի սեփականությունը համարելու և օրինական ճանաչելու մասին» թիվ 687-Ա որոշման 1-ին կետի վերջում տեքստը լրացնել «Ինքնակամ կառույցները հաշվառված են Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեում թիվ 2023NZZNYF ծածկագրով:» նախադասությամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Զ.ՄԱՆՈՒԿՅԱՆ

«16» նոյեմբերի 2023 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 նոյեմբերի 2023 թվականի N 710-Ա

Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 8-Ի ԹԻՎ 689-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի և 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի դրույթներով, որոշում եմ՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի 2023 թվականի նոյեմբերի 8-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Հայկավան բնակավայրի 1-ին փողոց թիվ 7/1 հասցեում գտնվող արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության համայնքապատկան հողամասի վրա գտնվող արտադրական նշանակության շինությունները համայնքի սեփականությունը համարելու և օրինական ճանաչելու մասին» թիվ 689-Ա որոշման 1-ին կետի վերջում տեքստը լրացնել «Ինքնակամ կառույցները հաշվառված են Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեում թիվ 2023JD9TGS ծածկագրով:» նախադասությամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Զ.ՄԱՆՈՒԿՅԱՆ**

«16» նոյեմբերի 2023 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 նոյեմբերի 2023 թվականի N 711-Ա

Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՀՐԱՄԱԲԵՐԴ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 08-108-0042-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ՆՈՐ ԱՌԱՋԱՑԱԾ 0,0145 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՏՎԱԾԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 24-րդ, 28-րդ, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով և համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի, դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետի պահանջների որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Վահրամաբերդ բնակավայրի տարածքում գտնվող 08-108-0042-0001 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, այլ հող գործառնական նշանակության 0,0145 հեկտար մակերեսով հատվածի գործառնական նշանակությունը փոխել հասարակական կառուցապատման:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված 0,0145 հեկտար մակերեսով հողամասը հասցեավորել՝ «Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գյուղ Վահրամաբերդ, 1-ին խճուղի, 29/3 հողամաս»:
3. Սույն որոշմամբ կատարված փոփոխությունները գրանցելու նպատակով, ներկայացնել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Զ.ՄԱՆՈՒԿՅԱՆ**

«17» նոյեմբերի 2023 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 նոյեմբերի 2023 թվականի N 712-Ա

Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՀՐԱՄԱԲԵՐԴ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 08-108-0040-0017 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ՆՈՐ ԱՌԱՋԱՑԱԾ 0,041778 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՏՎԱԾԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 24-րդ, 28-րդ, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով և համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի, դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետի պահանջների որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Վահրամաբերդ բնակավայրի տարածքում գտնվող 08-108-0040-0017 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, այլ հող գործառնական նշանակության 0,041778 հեկտար մակերեսով հատվածի գործառնական նշանակությունը փոխել բնակելի կառուցապատման:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված 0,041778 հեկտար մակերեսով հողամասը հասցեավորել՝ «Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գյուղ Վահրամաբերդ, Բյուրակն թաղամաս, 2-րդ խճուղի, 8/1 հողամաս»:
3. Սույն որոշմամբ կատարված փոփոխությունները գրանցելու նպատակով, ներկայացնել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Զ.ՄԱՆՈՒԿՅԱՆ**

«17» նոյեմբերի 2023 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 նոյեմբերի 2023 թվականի N 713 -Ա

Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԽՈՒՐՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 08-007-0049-0095 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ՆՈՐ ԱՌԱՋԱՑԱԾ 0,00288 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՏՎԱԾԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 24-րդ, 28-րդ, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով և համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի, դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետի պահանջների որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրյան բնակավայրի տարածքում գտնվող 08-007-0049-0095 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, այլ հող գործառնական նշանակության 0,00288 հեկտար մակերեսով հատվածի գործառնական նշանակությունը փոխել բնակելի կառուցապատման:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված 0,00288 հեկտար մակերեսով հողամասը հասցեավորել՝ «Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գյուղ Ախուրյան, Ախուրյանի խճուղի, 3-րդ փակուղի, 3/3 հողամաս»:
3. Սույն որոշմամբ կատարված փոփոխությունները գրանցելու նպատակով, ներկայացնել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Զ.ՄԱՆՈՒԿՅԱՆ**

«17» նոյեմբերի 2023 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ N 714-Ա

«17» նոյեմբերի 2023 թվական գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԾԱՌԵՐԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԷՏ ԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի «Խնամքի և սանիտարական հատումների իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 897-Ն որոշման 47-րդ կետի դրույթներով և հաշվի առնելով էլեկտրական մալուխները անվտանգ անցկացնելու հանգամանքը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի բնակավայրերում սանիտարական էտի մասին

Որոշում եմ՝

1. Թույլատրել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի բնակավայրերում ծառերի սանիտարական էտ իրականացնել՝ պահպանելով անվտանգության կանոնները:

2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Ախուրյանի կոմունալ սպասարկում և բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենին կատարել Ախուրյան համայնքի բնակավայրերում ծառերի սանիտարական էտի աշխատանքները:

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքում սանիրատական էտի ենթարկած ծառերի ճյուղերը տրամադրել բնակավայրերի կարիքավոր ընտանիքներին և Արցախից բռնի տեղահանված ազգաբնակչությանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

17 նոյեմբերի 2023 թվական
գյուղ Ախուրյան